

Ամբաս Բիւրաս
Եմբագրութիւն «Փիիկնիկ» Ի
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

Չ.Բ.Ե. Գ. Ե. Կ. Ը.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Չ.Բ.Ե. Գ. Ե. Կ. Ը.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի Մէկ զրուս ողշի

ՇԱԲԱՐԱՐԵՐՔ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ Ա ժ Ն Ե Գ Ի Ն Ը
Կ Ա Ն Ի Կ Ե
Ձեռագիր եւ չ'դարձուի

Կ Ո Վ Կ Ա Ս
Տ Ա Ր Ե Կ Ա Ն Բ Վ Ղ . 6
Ա զ զ Ե ր Կ ' ը ճ զ ու ճ -
ու ի ճ մ ա ս մ աւ ո ր
պ ա յ մ ա ճ ճ Ե ր ո վ .

Գ. ՏԱՐԻ

21 ՄԱՐՏ 1903

Թիի 30

ԲԻՐԱՄԻՏԻ ՆԵՐՎԱՅԱՅՈՒՄԸ

Յուսացուածէն աւելի փայլուն ու յաջող երեկոյթ մը եղաւ կիրակի գիշերուան թատերական ներկայացումը հայ նորակազմ խմբին ձեռամբ. կըրնանք ըսել նոյնիսկ որ ճշմարիտ յաղթանակ մըն էր երեք գլխաւոր դերակատարներուն՝ Տիկին Մառին. Շաւարշի և Շիշմանեանի համար. ժողովուրդը որ ասկէ առաջ տրուած ներկայացումներէն յուսախաբ, կասկածանքով եկած էր թատերասրահը, առաջին արարուածէն իսկ իր գոհունակութիւնը չ'ածկեց և քանի խաղը առաջ կ'երթար նոյն համեմատութեամբ ալ հանդիսականներու համակրական ցոյցերը կը բազմապատկուէին քաջալերիչ ծափերու տարափներով:

Տիկին ՄԱՌԻ Գաթարին Հովուարտի դերը հիանալի կատարելութեամբ մը գլուխ հանեց՝ յուզելով ամբողջ սրահը. Ուրիշ որ և է խաղի մէջ չէինք տեսած Տիկին Մառին այսքան կատարեալ արուեստագէտ:

ՇԱԽԱՐՇ ևս էթէլվուտի գերին մէջ կրցաւ ցոյց տալ իր ամբողջ անթիսթի կարողութիւնը:

ՇԻՇՄԱՆԵԱՆ որ Հանրի թագաւորին դերը կատարեց, նոյնպէս կատարեալ յաջողութիւն մը ունեցաւ: Իրեք արուեստագէտներն ալ հաւասար համակրութեամբ ողջունուեցան հասարակութեան կողմէ, որ երկար ատենէ ի վեր առաջին անգամ առիթ կ'ունենար ներկայ գտնուելու այդքան լաւ պայմաններով տրուած տրամի մը ներկայացման:

Ձաւեշտը որ յաջորդեց տրամին, կրնանք ըսել որ աւելի մեծ յաղթանակ մը եղաւ մեր երեք դերասաններուն համար: Ամբողջ արարուածը անցաւ անվերջանալի քահքահներով եւ ծափահարութիւններով. Շիշմանեան և Շաւարշ իրար գլեցին իրենց քոմիքի դերին մէջ ու ժողովուրդը մեկնեցաւ ամենալաւ տպաւորութեան մը տակ, հարցնելով թէ ե՞րբ արդեօք տեղի պիտի ունենայ յաջորդ ներկայացումը:

Տիկին Մառին արդէն քաջաժանօթ էր Ալեքսանդրիայի հայ հասա-

րակութեան, սակայն Շաւարշ ու Շիշմանեան շատերու համար յայտնութիւն մը եղան և ներկայացումը աւարտելէն վերջ հանդիսականներու կարծիքը այն էր որ երկու հայ դերասանները շուտով պիտի մոռցնել տան Փասուլեաճեաններու և Պէնկլեաններու թողած պարագը:

Յաւալին այն էր որ պէտք եղածին չափ բազմութիւն չի կար թատրոնը և հոս կրնանք հաւատուիլ թէ հասոյթի տեսակէտով շատ նիհար արգիւնք մը ունեցաւ սոյն անգրանիկ ներկայացումը: Բայց այս պարագան արդէն նախատեսուած էր: Գիտէինք որ տեղոյս հայ հասարակութիւնը շատ մը պատճառներ ունէր հայ թատերական ներկայացումներէ խրտչելու համար:

Այս առաջին ներկայացումը սարքելով Պ. Շաւարշ նպատակ ունէր մանաւանդ փարատել այն յոռի տպաւորութիւնը որ Ալեքսանդրիայի թատերասէրներու մտքին մէջ քանդակուած է հայ թատերական ներկայացումներու մասին:

Այն միահամուռ գովեստները որ կիրակի գիշերուան ներկայացումէն ի վեր կը տեղան, ցոյց կուտան թէ համակրելի գերասանը հասած է իր նպատակին: Այժմ վստահ կրնանք ըլլալ որ յաջորդ ներկայացումներուն հասարակութիւնը առանց դժկամակութեան և առանց կասկածանքի պիտի գայ թատրոն:

Աւելի կանոնաւոր և աւելի հաստատ հիմ մը տալու համար այդ ներկայացումներուն, հայ թատրոնի համակիր երիտասարդներ արդէն որոշած են մասնախումբ մը կազմել որ միջոցներ խորհի երեք ամսուան մէջ վեր ներկայացում կազմակերպելու: Այժմէն կը սիրենք յուսալ որ իր ջանքերը յաջողութեամբ պիտի պսակուին:

Երբեք է ներկայացումները պիտի

ընտրուին Մնակեանի լաւագոյն տրամներու մէջէն: Ասկէ զատ, նոյնիսկ առաջին անգամ ներկայանալի ֆոլեսի մը պիտի տրուի որուն հեղինակն է նոյնիսկ... Տ. Շիշմանեան: Որովհետեւ Տ. Շիշմանեան որքան յաջող դերասան՝ նոյնքան ալ քաջ տաճկագէտ մըն է և միանգամայն գրող մը որ խմբագրութեան ասպարէզէն ալ անցած է: Տ. Շիշմանեան իր թ փառական կեանքին մէջ առիթ ունեցած է շատ մը բաներ դիտելու և անոնցմէ իրական կեանքէ քաղուած քովտի մը գրած է երեք արարուած «Անճնուէր Զուռնաճիկ կամ Հրաշագործ Շաշվարդ» անուամբ: Դէպքը կ'անցնի կիպրոս տաճկական շրջանակի մը մէջ: Մենք որ նիւթին մօտէն տեղեակ ենք, կրնանք հաւատուիլ որ հանդիսականները երբէք առիթը պիտի չ'ունենան ձանձրանալու այս ներկայացումէն:

Նորակազմ թատերախումբը միտք ունի նաև հայերէն լեզուով տրամկամ քովտիներ ևս տալու, ի մէջ այլոց Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները» քովտիի վերածուած:

Այս ամէնքը լաւ, խիստ բարի, սակայն հարկ է որ հասարակութիւնն ալ իր կողմէ չ'վարանի քաջալերութեան մասին: Մինչև հիմակ կրնար իր առ հայ թատրոնն ունեցած անտարբերութիւնը և նոյնիսկ արհամարհանքը արդարացնել առարկելով որ տըրուած ներկայացումները շատ անկատար, շատ խղճալի բաներ էին: Արդ, կիրակի գիշերուանէ ի վեր, Տիկին Մառիի, Շաւարշի և Շիշմանեանի ցոյց տուած դերասանական կարողութիւններէն ի վեր, այլևս այդ տեսակ առարկութիւն մը պէտք չէ որ գոյութիւն ունենայ: Արդէն, ինչպէս ըստինք վերը, հանդիսականները ամէնքն ալ շատ գոհ մեկնեցան Բիրամիտի թատրոնէն, հետեաբար այժմ կը մնայ իրենց այդ փոխադրութեան արդէն:

մէկ դրական ապացոյցը տալ չ'ընենք նաև իրենց պարտականութեանը մէջ և ներկայ գտնուելով այն վեց ներկայացումներուն որոնք տեղի պիտի ունենան:

Ալեքսանդրիայի բազմաթիւ հայ գաղութին համար ճշմարիտը ամօթ է որ չկրնայ գոնէ եռամսեայ թատերական Սէզօն մը ունենալ:

Ե. Օ.

ՎԵՐՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԸ

Յուշատետր

Տիկին Սարենիկի յիշատակին

Կ'առնեմ յուշատետրս, ու կը թղթատեմ այն էջերը, որոնց մէջ իմ վերջին տեսակցութիւններու և իր վերջին օրերուն տխուր, սրտաճմրիկ տպաւորութիւնները արձանագրած եմ:

Սարսուռ մը կ'զգամ հոգւոյս մէջ, երբ կը խորհիմ' թէ Ան ալ յիշատակի մը վերածուեցաւ, ու եկաւ թաղուիլ մեր սրտերուն մէկ անկիւնը, հոնկէ երևալու համար մեզի երբեմն երբեմն, ժամանակի մշուշով ազօտացած, բայց միշտ կենդանի, միշտ յուզիչ, միշտ տխուր, միշտ գինովցուցիչ, միշտ անուշ, միշտ մեղմազդիկ, ցնդած երազի մը պէս: Թէ միայն անուն մը մնաց մեզի իրմէն, տնուն մը, որ մեր սրտերուն մէջ մեզի հետ պիտի ապրի միշտ մինչև այն օրը երբ մենք ալ մէկ մէկ յիշատակներ պիտի դառնանք:

Կ'ընդօրինակեմ այդ սև էջերը, կ'ուզեմ որ ամէն ոք կարդայ, անոնք որ անձամբ, եւ անոնք որ անունով միայն կը ճանչնան, կամ առաջ ճանչցած են զինքը: Կ'ուզեմ որ չի մոռցուի շուտով Անոր յիշատակը, Անոր անունը, Անոր որ շատ աւելի բարձր դիրքի մը սահմանուած թէպէտ, սա-

կայն անձանթ մնացած էր շատերուն դեռ, բազդին մէկ կատակովը:

Հոկտեմբեր 1902

«Տիկին Սարենիկը ծանր հիւանդ եկած ու Հէլուան մեկնած է դարմանուելու համար»: Դառն կանխագագում մը սիրտս կը յուզէ. ինչո՞ւ արդեօք գուժի մը տպաւորութիւնը կը թողու վրաս այդ լուրը: Այդ տպաւորութեան տակ անցեալը կը պատկերանայ աչքերուս առջև, որոշ ու մեկին: Գեղանի, շնորհալի, հրապուրիչ տեսքը, իր բարձր ու դիւրաթեք հասակը դէմս կը գծուի: Կը տեսնեմ իր դէմքը, ժպտուն ու վարդագոյն և իր աչքերը, որոնցմէ ազնուութիւն, համակրանք կը հոսէր:

Հապա այն անուշ, յստակ, հնչուն ձայնը, որ սփոփանք մ'էր լսել: Ես տըղեկ մ'էի, ու պաշտում մը ներշնչած էր մանուկ սրտիս, այնքան անկեղծ: Ան կը սիրէր տղաքները, հոգի կուտար անոնց համար: Համակ գորով, համակ գուրգուրանք էր անոնց համար. մայրութեան իտէալն էր Ան. ո՞րքան ակնածանօք, ո՞րքան հիացմամբ կը մօտենայի իրեն, հակառակ իր ցոյց տուած քաջալերանքին, ցոյց տուած ազնուութեան:

Մենք դպրոցականներս, մանաւանդ խենթ կ'ըլլայինք իրեն համար: Մեր քննութիւններուն երբ ներկայ գտնուէր, գոհունակութեան ժպիտ մը կը ցոլար մեր ամենուս դէմքին վրայ: Իր ներկայութիւնը կը փրկէր մեզ տգէտ ու չար քննիչներու ձեռքէն, որովհետև պապանձեցուցիչ պատկառանք կ'ազդէր անոնց: Իր հարցաքննութիւններուն թէպէտ խիստ, բայց գիտէր պատասխաններ առնել ամենէն տկարներէն իսկ: Իր վաւակները երջանիկ էակներ կը թուէին մեզի, այնքան անուշ, այնքան զարգա-

ցած մայր մ'ունենալուն համար:

Միտքս կուգան իր ջանքերը, իր չարաչար աշխատութիւնները, Սամսոնի աղջկանց վարժարանին բարեկարգ վիճակ մը տալու համար: Այն նախանձի հոսանքը, այն ազտոտ խոչնդոտները, որ իրեն գէմ կ'ստեղծուէին, աամիկներէն: Գործել կուզէր խեղճը, օգտակար կուզէր ըլլալ ապագայ սերունդին, բայց չէին հասկնար զինքը շրջապատողները, ոչովհետև այնքան բարձր էր անոնցմէ:

Ինքնագիտակցութիւնը ունէր իր կարողութիւններուն, իր ուժին. գիտէր, կ'զգար թէ շատ բաներու կըրնար ծառայեցնել զանոնք օգտակար պէս. ու կը տառապէր կաշկանդուած հոգիի մը ամենազառն տառապանքներով. կը տառապէր ան, տեսնելով այդ ուժին ամլութեան դատապարտուիլը:

Վերջերս սահմանափակելու ստիպուած էր ինքզինքը տանը մէջ, և իր որբերուն հանգէպ ունեցած մայրական պարտականութիւններով կ'ուզէր գոհանալ: Սակայն հատնում մ'էր այդ կեանքը իրեն համար, ինչպէս վանդակին կեանքը՝ սաւառնիլ ուզող թռչունին համար:

«Հիւանդ է». խեղճ կին կերևայ թէ, իր առողջութիւնը չէ կարողացած տոկալ, այնքան տառապանքներու:

Գահիրէ 24 Դեկտ. 1902

Հեզնութիւն է կեանքը արդարև: Տիկին Սաթենիկը գացի տեսնելու, խեղճ կին:

Երբ ներս մտաւ սենեակէն ժրպտուն զիս դիմաւորելու, հազիւ կարողացայ խղզել զարմանքի բացագանչութիւն մը: Ինչ փոփոխութիւն. իր svelte հասակը կ'քած էր, ծունկերը կը դողային, այտերը խռոչացած, խորշումած էին, ձայնը մարած: Միայն իր աչքերը և իր աղւոր երկար մազերը

նոյնն էին: Բայց հակառակ իր գեղեցկութեան թառմելուն, նոյնն էր միշտ. նոյն Տիկին Սաթենիկը. և թե՛րեւս աւելի աղւոր, աւելի գեղանի, իր հոգեկան ու մտաւորական գեղեցկութիւնները աւելի կը շեշտուէին հիմա: Առաջին հարցումը իմ մասիս էր. Հարցուց թէ գո՞հ էի վիճակէս: «Ըսէ, տըղաս, ըսէ ինձի, խոստովանէ ինձի ամէն բան, զիտես որ կուզեմ և կրնամ հօրդ խօսելով միջոցներ գտնալ բարեփոխելու ներկայ պայմաններդ»: Այնքան բարութիւն արդեօք կարելի է գտնել հրեշտակի մը քով, կը մտածէի, տեսնելով ինձմով հետաքրքրուիլը իր այդ ֆրիթիֆ վիճակին մէջ իսկ:

Ըսաւ թէ բժիշկները մեծ կարելորութիւն մը չ'էին տուած իր տկարութեանը, և յոյս յայտնած էին իր մօտաւոր ժամանակի մէջ ապաքինմանը մասին: Ատիկայ մխիթարութիւն մ'էր գէթ: Ես ալ ջանացի նոյն յոյսը ներշնչել իրեն, շեշտելով Հելուանի օգին առաւելութիւնը, և հիւանդներու համար գործած հրաշքները:

«Այո ըսաւ, այո, կուզեմ յուսալ կուզեմ ապրիլ, որովհետև հակառակ կեանքէն շատ բան մը չ'սպասելու, հակառակ անոր վիշտերուն ու դառնութիւններուն, շատ անուշ է ան, տըղաս, շատ շատ անուշ, և այդ բանը մանաւանդ իմ վիճակիս մէջ գտնուողները կ'զգան»: Կը հազար թէպէտ բայց ոչ շատ: Աստուած իմ, արդեօք ճի՞շդ է, պարզ Bronchite մ'է իր հիւանդութիւնը:

«Յտեսութիւն, Ազեքսանդրիա, ըսաւ մեկնելու ատենս, ձեռքս սեղմելով, այս անգամ քանի մը օր պիտի մնամ. հոն լաւ մը կը պտըտինք, ես ալ առողջացած կ'ըլլամ»:

Չէ', չէ', պէտք է որ ապրի, գեռ շատ կանուխ է մեռնիլը իրեն համար: Կը յուսամ որ պիտի ապրի, և բուժուի:

Գահիրէ 13 Փետր. 1903

Ճիշդ է, տխուր լուրեր կը հասնէին Տիկին Սաթենիկի մասին, թէպէտ Աղեքսանդրիա, բայց չ'էի հաւատար։ Ինչքան միամիտ եմ եղեր։

Այսօր գացի տեսնելու և այս օրը, չ'պիտի մոռնամ երբէք։

Կը վախնայի դուռը բանալու։ Մտայ վերջապէս, ու դողացի, աւա՛ղ անյոյս է։ Canapéին վրայ պառկած գտայ բոլորովին հատած ու մաշած. չ'էի կրնար յուզումս ծածկել։ Մօտեցայ, չուզեց ձեռքը տալ, բռնի առի. հեռուն աթոռ մը ցուցուց նստելու համար. մտիկ չ'ըրի և քովը նստայ։ Չ'էր խօսեր, ես ալ բառ չ'էի գտներ իրեն ըսելու։ Ապշած, երեսը կը նայէի. Ան լոկ դուրսը կը շարժէր դառն ժպտով մը։ «Ետ գէշ եմ» ըսաւ. Աստուած իմ, ձայնը բոլորովին խեղդուած էր։ Կոկորդը սեղմեց ձեռքովը. «Աս... ըսաւ. ա՛խ, աս...» սկսաւ հազալով թքնել։ Ո՛հ, տառապանք մ'էր դիտել Այն կիկը... այս վիճակին մէջ։

Չորս ժամ յարատե հազաց, ո՛հ, խղզուելու աստիճան կը նեղուէր. քանի մը անգամ աչքերը լեցուեցան։ Երկու անգամ ոտքի ելաւ... բայց չ'էր կրնար յառաջանալ. թեւ մտայ և սենեակին մէջ քանի մը քայլ ըրաւ, եւ նորէն պառկեցաւ canapéին վրայ։ Բըժիշկը, որուն լուր ըրինք երկու անգամ, կ'ուշանար. շատ մը խնդրելներէ վերջ հաւանութիւն տուաւ ինծի անձամբ երթալ բերելու։ Դարմանումի ատեն չ'ուզեց որ քովը կենամ. «Մեղք ես ըսաւ, սիրտդ չի դիմանար տառապանքիս, դուն ալ մի՛ տառապիր»։ Ա՛խ, այդ կնոջ սիրտը. միշտ ուրիշները, միշտ ուրիշներուն տառապանքը, ուրիշներուն ցաւը. իսկ իրենները... այն ատեն միայն կը մտածէր երբ զինք սիրողները տառապեցնէին։

Ա՛խ, ինչո՞ւ քիչ մը եսասէր չ'եղար, գէթ, ինչ՞նչ հրեշտակ։


Չ'եմ ուզեր մտածել, սե սե խորհուրդներ միտքս կուգան։

Աստուած, գթալ չ'ե՞ս գիտեր Դուն։

(Շարունակելի)

Գ.

ԳՈՂ ԿԱՅ ԳՈՂ



Շարժումն նորութիւնը՝ մեր Ս. Պօղոս Պետրոսի ձեմիշներուն կողպատուիլը, իրենց կապարէ խողովակներէն։

Խե՛ղճ Փիլիպպոս Գէորգեան, հիմայ ինչի՞ ծառայեց քու կղպանքը մեր Առաջնորդարանի շրջափակին համար, որ, նասրէտտիների թիւրպէին պէս, բաց է չորս կողմէն։

Եթէ հայ մամուլը գտնուէր գրաբարի տիրապետութեան տակ, այս գէպքը պիտի հրատարակուէր գրեթէ այսպէս.

Յամին Շնորհաց 1903, յետքեւսասաներորդումն աւուր ամսեանն Մարտի, յերկրորդումն ամի առաջնորդութեանն Տեառն Յովսէփայ Եգիպտոսի եպիսկոպոսին, եմոս գող ի գիւերի՞ եթէ ի հաւախօսի, — ո՛չ ոք գիտացարար կապոս կողուցոս ի կապարեայ խողովակացն զարսաֆնոցն ի թիւս ութեսասանս, որք զԱռաջնորդարանան եւ զվարժարանօքն շուրջանակի կառուցեալք։

Որչափ որ ստուգեցինք Դիւանատունէն և ուրիշ հաւաստի աղբիւրներէ, գողը՝ ներսէն է. գողութեան նըպատակը՝ լաւ մտածուած ու սերտուած շահագիտութիւն մըն է. թէ և կապարէ խողովակները բան մը չ'են արժեք։

Գողը ներսէն է, ատոր տարա-

կոյս չը կայ. անանկ գող մը, որ կարծես թէ ինք դրած հաստատած ըլլար այդ խողովակները. գող մը որ, ամենայն դիւրութեամբ ու հանդարտութեամբ զամբիւղը լեցուցած, վերցուցած, տանել փորձած է պարտիզպանին գործիները, տեղէ մը, ուր իբր թէ իր ձեռքովը դրած ըլլար զանոնք. գիշերը, պահապան մը տեսած է անոր ցատկելը պարսպին վրայէն, քովինեղ փողոցը, տեսած է զամբիւղը թողուլ փախչիլը. այդ պահապանն է որ շեպէնի պահականոցը կը տանի կը յանձնէ. . . . զամբիւղը, գողը փախած էր:

Մենք երբ հրապարակաւ կը յայտնենք մեր կարծիքն ու կը պնդենք թէ՛ գողը ներսէն է, Խնամակալութեան Փոխ-Ատենապետ Վսեմ. Արահամ բաշա Բարթողին կը մնայ լուրջ քննութիւն մը բանալ, — ըլլայ ազգային պատիւին խնայելու համար, — ու նորէն կ'ըսենք, վստա՛հ ենք թէ նորին Վսեմութիւնը պիտի յաջողի գտնել խողովակներուն գողը:

Ոմանք կը կայծեն թէ այդ գողը՝ ծուծն ու ոսկորը մեր եկեղեցիին հացովը շինուած անխուսափելի արարած մըն է, որուն՝ ազգը ճակատագրականօրէն պարտաւոր է մինչեւ ցմահ գործ մը տալ, շինութիւն մը, նորոգութիւն մը, որուն պատրուակովը կարենայ ինչ քենէ շատ աւելի հանգիստ օրեր անցընել այդ երանելի արարը:

Վսեմ. Արահամ բաշա Բարթող, ամենքս գիտենք, չ'ուզեր երբէք մեկ միջիեմ աւելորդ ծախք ընել տալ ազգ. արկղէն, առանց օգուտի: Կը սիրենք ուրեմն յուսալ թէ նորին Վսեմութիւնը՝ պիտի չը հանդուրժէ, անտարբեր դիտողի մը պէս, պաշտպանուիլը՝ տեսնել — այն ալ ազգա-

յին անտուկին տուժելովը, — ո՛ր է մէկու մը, ըլլայ այն՝ Վահրամ մը կամ Համուսա մը, Թորոս մը կամ հասան մը:

Ք Ր Ո Ն Ի Կ

Մեր այսօրուան թատերական քրոնիկին մէջ ակնարկուած թատերասիրաց Յանձնախումբը, ինչպէս կը լըսենք, կազմուած է արդէն: Սոյն Յանձնախումբը կը բաղկանայ 12 անձերէ որոնք արդէն գումարում մը ունեցած են և ընտրած են իրենց դիւանը հետեւեալ կերպով.

Ատենապետ Տ. Լևոն Նիզամեան
Գանձապետ Տ. Գէորգ Իփէքեան:

Սոյն Յանձնախումբին պաշտօնը պիտի ըլլայ նորակազմ հայ թատերախումբին վեց ներկայացման համար հարկ եղած նիւթական միջոցներն ապահովել:

Յաջողութիւն կը մաղթենք:

— ՆՇԻԿ ԵՐԷՅ (Տ. Առեփա Բհնջ. Շաղոյեան) յաջողեցաւ գլուխ հանել Գող Մժղօ վէպին տպագրութիւնը: Արժ. հեղինակը Գահրէի Որբախնամ Ընկերութեանց Խառն Յանձնաժողովին յանձնած է արդէն 600 օրինակ այս վէպէն, ծախուելու համար ի նպաստ որբերուն:

Գող Մժղօի վրայ կը փափաքէինք գրել, դժբաղդաբար, մինչև ցարդ օրինակ մը չը ստացանք այդ երկասիրութենէն որ կարդանք ու այնուհետեւ յայտնենք մեր տեսութիւնները:

— ԶեթՈՒՆԻ համար կազմուած ընկերութեան կանոնագիրը կը պատրաստուի յատկապէս կարգուած Յանձնախումբի մը կողմէն: Երբ կանոնագրին խմբագրութիւնն աւարտի, պիտի ներկայացուի այն՝ Ընդհ. Ժողովոյ եւ պիտի ենթարկուի վիճարանութեան:

— Ծրանսայի Խորհրդարանին մէջ բաւական կարեւոր հարցապնդումներ եղած են Պ. Տէլգասէի՝ քանի մը հայասէր երեսփոխաններու կողմէն. Պ. Մարսէլ Սանպա առաջարկած է Հայկական Հարցն ալ Մակեդոնականին հետ լուծել տալու մասին ջանքեր ընել Եւրոպական միւս տէրութեանց քով:

— Յարը նոր հրովարտակով մը հրամայած է բարեկարգել կայսրութեան ամեն կարգի ու ցեղի հպատակներուն կացութիւնը, ըլլայ տնտեսական, բարոյական քաղաքական ևն:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Հարց Պատասխաններ. Բ. Հրատարակութիւն Գահիրէի Լսարան—Ընթերցատան Ընկերութեան Գրական Մասնաճիւղին, կամ աւելի ճիշդը, Տիար Սեդրակ Ստեփան Օսապաշեանի, նոյն ընկերութեան աննկուն ու անխոնջ անգամ մեր յարգելի բարեկամին:

Այս գրքոյկը կը բաղկանայ 96 էջերէ. գինն է 10 զրուշ ողջ:

«LES LUSIGNANS», Ծրանսերէն գեղեցկատիպ գրքոյկիս երկասիրողն է Տիար Արմենակ Հ. Աղատեան, ապագայ խոստացող երիտասարդը: Թերթիս ծաւալը չը ներեր երկայնօրէն զբաղիլ այս գրքոյկին հրատարակութեան շարժառիթովը. գրական արժէքին, ոճին, ևն,ի մանրամասնութիւններովը: Լաւ է որ ամեն ֆրանսագէտ Հայ ունենայ անկէ:

Գրքն է 10 զրուշ ողջ:

ԱԶԳԵՐՈՒՆ ԱԶԳԸ

Խնչպէս հասկըցնել մեր անհոգ ու մեր վրայ բնաւ չը խորհող բաժանորդներուն թէ՛ իրենք կը տանջեն մեզ տնտեսապէս ու բարոյապէս և թէ՛ ի վերջոյ պիտի խափանել տան թերթ մը, զոր երեք տարի կարգացին ճրարաբար:

ՊԱՏԿԵՐԱԶՍՐԴ ՎԱԶԳԻՆ — ԵՐԳԱՐԱՆ

Մեծ զեղչով պիտի ծախուի 600 մեծագիր երեսներէ բաղկացած սոյն ընդարձակ երգարանը, իր մէջ կը պարունակէ բոլոր հին ու նոր երգերը և 10ի չափ նշանաւոր բանաստեղծներու պատկերներ և կենսագրականներ: Գինն է, ճամբու ծախքով միասին, Տոլար 1. 15. Եւրոպայի համար 5 ֆրանք, Պարսկաստանի համար 4 ֆրանք:

Գիմել՝ K. KHORENIAN
P. O. B. 379 LYNN, MASS.

Տ. Փանոս Ծաւրիկեան, Աղեքսանդրիա.

Տ. Գ. Կազանչեան, Գահիրէ.

«ԱՐԱԲՍ»

Հայկական տպարանը թէ՛ Հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն անսակ տպարանէն: Գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ:

Եւրոպայի համար 5 ֆրանք, Պարսկաստանի համար 4 ֆրանք:

Ա Չ Դ Ե Ր

Անգլիերէնի ժամաւոր դասեր աւանդողը— որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դասախօսութիւնները Պէռլիճի մէթոտով. հիմայ ունի բաւական թիւով աշակերտներ. կը խոստանայ շաբաթը միայն 4 անգամ դաս առնողին սովորեցընել 5-6 ամսուան մէջ գրել, կարգալ ու խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար դիմել Փիւնիկի խմբագրութեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՄԱՆ

Մէնչիյէյի հրապարակը, Բասափ Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 խօնութիւն:

Ամեն տեսակ արեւելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տէօնէր եւ Շիշֆէպպի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրհէմէեան և Սարգիս Հիւսէյինճեան

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի դիւրամատչելի պայմաններով, կանխիկ վճարումով: Գիներուն շափաւորութեամբը կրնայ մրցիլ օտարներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարդ հոն յաճախող պատազգայիններուն հետզհետէ աճող թիւը պերճախօս վկայութիւն մ'է արդէն սոյն ճաշարանին մէկէ աւելի առաւելութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշարանը:

ԱՐՄԵՆԻԱ ԱԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին կարևոր մասերուն ամփոփումը, հայերէնի թարգմանում, գեղեցիկ հատոր մը, 157 էջերով, հեղինակին պատկերով և ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տօնապետեան. Գինն է 3 իրանգ. Գիմել:

Mr. Donabedian
177 Godolphin Road
Shepherd's Bush London.W.

ՏՐ . ՍՍՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ
Սէսօսրիս փողոց թիւ 1
«Ծար ս'Սչէֆսանսրիսի սպարանին
Վրայի Ս. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխղեմով կը բուժէ մանաւանդ արեան վերարերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս քրէն քորը ժամը 2-5: Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն գիմալ աղքատ հիւանդները: